ՊԱՆԴԽՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ XVIII—XIX ԴԴ. ՀԱՅ ՎԻՄԱԳԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ամեն մի ստեղծագործություն, լինի դա արվեստի գործ թե գրական հուշարձան, նախ և առաջ տվյալ դարի ու ժամանակի ծնունդ է։ Վիմագիր գրականությունն էլ չէր կարող կտրված լինել իր ժամանակից, հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած շրջադարձերից[1]։ Վիմագիր բանաստեղծության մեջ այս կամ այն չափով ու ձևով իր արտացոլումն են գտել հայ ժողովրդի վերաբերմունքը դեպի քաղաքական անցուդարձերը, նրա պատկերացումները բնության երևույթների մասին, նրա հավատալիքները, կենցաղն ու սովորությունները։ «Մեր հայերը՝ ամենեն ավելի ստվար թիվով ու ամենեն ավելի գրական որակով հիշատակներ ձգած են իրենց ապագա սերունդներուն, կարելի եղածին չափ վայելչորեն ու անկորնչելի կերպով քանդակված մեծ ու պզտիկ քարերու վրան, անբաղդատելիորեն գերազանց ուրիշներե, սրտագրավ, հուզիչ և խորհրդավոր՝ իրենց պարունակությամբ մանավանդ զարմանալի կերպով հետաքրքրական իրենց կենսագրական հակիրճ տեղեկություններով, թվականներով ու այլ թանկագին ծանոթություններով»[2],— գրում է Գ. Հնասերը։

Հայ վիմագիր ստեղծագործություններն ունեն ոչ միայն պատմագիտական, աղբյուրագիտական, սոցիալ-տնտեսական կյանքը լուսաբանող, արվեստագիտական, ազգագրական ու կենցաղագրական նշանակություն, այլև գրական արժեք և հանդիսանում են բավական հարուստ ու ինքնատիպ մշակութային մի ժառանգություն։

Հ. Աճեմյանը խոսելով մեզանում վիմագիր գրականության ուսումնասիրության վիճակի մասին, դեռևս 1934 թ. նկատում է, որ հայ վիմագիր «գրականությունը բազմատեսակ հետաքրքրական էջեր ունի, որոնց հավաքագրությունն ու հրատարակությունը՝ բացատրական ծանոթագրություններով հանդերձ, լուրջ ուսումնասիրության արժանի է»[3]։

---

1 XVIII—XIX դդ. հայ վիմագիր բանաստեղծությանը վերաբերող նյութերը քաղել ենք հետևյալ հեղինակների աշխատություններից՝ Գ. Հնասեր (Մանուկյան), Հայ գրականությունը տապանաքարերու վրա. ԺԶ, ԺԷ, ԺԸ և ԺԹ դար («Բազմավեպ», 1929, հ. ՁՁ), Գ. Հնասեր (Մանուկյան), Անհետացած հայերեն արձանագրություններ Կ. Պոլսո մեջ («Բազմավեպ», 1930, հ. ՁԸ), Գ. Ա. Գասպարյան, Հ. Հ. Խաչյան, Ազգային գերեզմանատուն հայոց Շիշլիի, Կ. Պոլիս, 1922, Հ. Քոսյան, Հայք ի Զմյուռնիա և շրջակայս, հ. Ա, Զմյուռնիա և հայք. Հետազոտություն արձանագրությանց և հիշատակարանաց, Վիեննա, 1899, Հ. Քոսյան, Գերեզմանատուն կաթողիկե հայոց Կ. Պոլսո, Վիեննա, 1931, Հ. Քոսյան, Բարձր Հայք, հ. Ա, Կարին քաղաքը, Տեղագրություն, պատմություն, սովորություններ. Վիեննա, 1925, Ա. Գարտաշյան, Նյութեր Եգիպտոսի հայոց պատմության համար, Գահիրե, 1943, «Ազգագրական հանդես», գ. XVII, 1908, № 1։

2 Գ. Հնասեր, Հայ գրականությունը տապանաքարերու վրա..., էջ 18։

3 Հ. Աճեմյան, Հայերեն տապանագիրներու արժեքը («Բազմավեպ», 1934, հ. ՂԲ, էջ 166)։

Հայ վիմագիր գրականության հետաքրքրական կողմերից մեկը նրանում մեր ժողովրդի պատմության ու տարագրության արձագանքն է։ Հայ թե՛ գյուղական և թե՛ քաղաքային բնակչությունը, չկարողանալով իր աշխատանքով հայրենի երկրում հայթայթել ընտանիքի ապրուստի միջոցներ կամ զրկված լինելով հողից, ինչպես նաև հարստահարությունների ու բռնությունների ճնշման տակ, հարկադրաբար թողնում էր տուն ու տեղ, հարազատներին, դիմում պանդխտության։ Պանդխտության մեկնածներից շատերը հայրենիք էին վերադառնում տարիներ անց, ծերացած, երիտասարդ կյանքի տարիներն օտարության ու թշվառության մեջ անցկացրած։

Ցափածո գործերից մեկում նկատի առնելով օտարների ու շահագործողների արհամարհանքը, ամենօրյա չարքաշ կյանքի բեռը, հարազատներից հեռու մնալու կարոտը, ինչպես նաև օտարության մեջ մեռնելու երկյուղը՝ հայրենակիցներին խորհուրդ է տրվում ինչ վիճակի մեջ էլ որ գտնվելիս լինեն հայրենի երկրում, չբռնեն պանդխտության փշոտ ու կորստաբեր ճանապարհը։ Բայց եթե, այնուամենայնիվ, դիմում են պանդխտության, ապա թող անպայման վերադառնան հայրենիք, հարազատների գիրկը.

Պանդուխտ եղբարք՝ օրինակ
Ըլլայ ձեզի իմ վիճակ,
Փութաք յերկիր ձեր երթաք՝
Օտար հողոյ տակ չ՚մնաք[4]։ (1881 թ.)։

Պանդուխտ հայի անապահով, ամենքից արհամարհված ու լքված կյանքն է պատկերված ժողովրդական բանահյուսության հետևյալ սրտահույզ տողերում.

Ղարիպ եմ օտար երկիր,
Սիրտս նեղի, կեանքս սպառի,
Թէ սրտիս խասրաթն ասեմ՝
Ապառաժ քարերն պատառի[5]։

Օտարության դիմելը մեծ ողբերգություն էր և իզուր չէր, որ այն ժողովրդի բերանում դարձել էր անեծք.

Եւ թէ մարդ մարդոյ անիծէ՝
Թող ասէ՝ ղարիպանաս,
Ի ղարիպութիւն երթաս՝
Ղարիպի հալն իմանաս[6]։

Պանդխտությունը, որպես ազգային չարիք, բավականին լայն արձագանք է գտել գեղարվեստական դրականության մեջ։ Օտար երկրներ պանդխտության մեկնածների կարեկցանքով լի կյանքն են պատկերել Մկրտիչ Նաղաշը, Նահապետ Քուչակը, XVI—XVII դդ. հայ տաղասացները։ Մ. Նաղաշը, օրի-

4 Գ. Ա. Գասպարյան, Հ. Հ. Խոշյան, նշվ. աշխ., էջ 265։
5 «Ողբ ղարիպի ասացյալ» («Արևելյան մամուլ», 1873, հունիս, էջ 264)։
6 Նույն տեղում։

նակ, գունեղ ու սրտահույզ կերպով է պատկերել հայրենիքից, հարազատներից բաժանված, պանդխտության մեջ իր գոյությունը քարշ տվող հայ մարդու վիճակը։

Հոգի մի ասեր ղարիպ, թէ չէ՝ իմ սիրտս կարունի,
Ղարիպն ի յօտար երկիր, գէմ խիստ դիժար կու լինի.
Զինչ հաւն երամէն ի զատ, մոլորած ի տեղ չի հանգչի,
Այնչափ երերուն կենայ, մինչոր իւր տեղն հասնի[7]։

Հայ ժողովրդի զավակները դարեր շարունակ ճաշակելով պանդխտության դառը պտուղները, վիմագիր արձանագրությունների մեջ ևս, ինչպես նշվեց, թողել են պանդխտությանը նվիրված սրտաշարժ երգեր, որոնք արտահայտում են հայրենի բնաջխարհից հեռացած հայ աշխատավոր մարդու հոգեկան տագնապն ու կարոտը, մտորումներն ու խոհերը[8]։

Պանդխտությանը նվիրված վիմագիր բանաստեղծություններին թեև հատուկ է թեմատիկ ընդհանրությունը, բայց, այդուհանդերձ, յուրաքանչյուր բանաստեղծության մեջ առավել շեշտվում է այդ ընդհանրության որևէ կողմը։ Մի դեպքում դա հայրենիքի ու հարազատների հանդեպ տածած կարոտի զգացմունքն է, մյուս դեպքում՝ պանդուխտի չարքաշ կյանքը, թախիծը, ճիչը՝ սոցիալական անարդարության դեմ, անդրշիրիմյան աշխարհում փրկություն գտնելու սին երազանքը և այլն։

Պանդխտության տարիներին կրած անլուր տառապանքները չեն մոռացվում նույնիսկ տարիներ անց, մանավանդ, երբ պանդուխտ հայը մի օր հիվանդության մահճին է գամվում։ Որքա՜ն տառապանքներ, որքա՜ն սին երազանքներ են ի դերև ելել նրա սպասելիքներով ու հույսերով լի կյանքում.

Պանդխտութիւն, ի՜նչ ահեղ
Ցաւեր կուտաս դու մարդուն,
Երբ խեղճ պանդուխտն օտար տեղ՝
Կ՚ինկնի մահիճ սեւ մահուն[9]։ (1881 թ.)։

Պանդուխտ հայ աշխատավորի համար դառը վերհուշ են այն ծանր տարիները, որոնք անցել են օտարության մեջ.

Ո՜հ, պանդխտութիւն, դառն ճակատագիր,
Դու քանի՜, քանի՜ կեանս մարդկային,
Ցանձնես ձեռս ատրովպէան կարեկիր՝
Նման դարձ վճիռ աստուածային[10]։

Մարդկային անհատը աշխարհ է գալիս կյանքի բարիքները վայելելու ակնկալությամբ, սակայն հասարակական կյանքում տիրող սոցիալական անհավասարության պատճառով նա իր կյանքը հաճախ անց է կացնում զրկանքների մեջ, հայրենիքից ու հարազատներից հեռու։

---

7 «Մկրտիչ Նաղաշ», Աշխատասիրությամբ Էդ. Խոնդկարյանի, Երևան, 1965, էջ 165։

8 «Հայ ժողովրդական պանդխտական երգեր», Տեքստը պատրաստեց, ներածությունը գրեց և ծանոթագրեց Մ. Մկրտչյան, Երևան, 1961։

9 Գ. Գ. Գասպարյան, Հ. Հ. Խաչյան, նշվ. աշխ., էջ 265։

10 Նույն տեղում։

Տխուր և հուսահատ է հնչում պանդխտության գիրկն ընկած հայ մարդու խոսքը.

Ես աշխարհ եկայ ուրախութեամբ,
Պանթղթուքիւնը հոգիս վառեց,
Հօրմէս, մօրմէս զուրկ՝ լալով՝
Չ՝դադրիր աչքս լալով[11]։ (1865 թ.)։

Հայ վիմագիր բանաստեղծությունների մեջ մանավանդ լայնորեն է պատկերված պանդուխտ հայ աշխատավորի իրավազուրկ ու հարստահարված, նյութական ծանր վիճակը. աշխատավորը օտարության է դիմում քիչ թե շատ ապահով կյանք ստեղծելու հույսով։ Հուզիչ է, օրինակ, Մշո աշխարհից պանդխտության մեկնած հայ կնոջ կյանքի նկարագիրը։ Նա հայրենիքում, չկարողանալով հոգալ իր չորս զավակների ապրուստը, հարկադրված դիմել է պանդխտության՝ դեպի Պոլիս.

Եկի ի Պոլիս չորս որբ զաւակօք,
Որ վերջը դառնամ երկիրս շահօք[12]։ (1862 թ.)։

«Շահօք» վերադառնալու փոխարեն նա հեռավոր այդ քաղաքում կրում է չարքաշ կյանքի բոլոր դժվարություններն ու փորձությունները, և ի վերջո անապահով կյանքը հիվանդության դուռն է գցում թշվառ ու անօգնական կնոջը։ Տնտեսական բարվոք կյանք ստեղծելու փոխարեն նա այդ տարիներին ձեռք է բերում «ցաւ մը անդարման» և պանդխտության մեջ կնքում է իր մահկանացուն, բախտի քմահաճույքին թողնելով ողբաձայն որբերին.

Եղաւ ինծի շահ ցաւ մը անդարման,
Լացին, ողբացին որբերս ողբաձայն,
Բաց ի աստուծոյ ոչ կայ յոյս որբոցս,
Այն եղեւ կրակ անբուժելի ցաւոցս։
Շատ աշխատեցայ՝ չգտայ դարման,
Վերջը զիս ձգեց պանդուխտ գերեզման[13]։ (1862 թ.)։

Տխուր ու չարքաշ է եղել նաև արաբկիրցի հայ կնոջ կյանքն անցյալում։ Տնտեսական հոգսերն ու կյանքի աննպաստ պայմանները մաշել են նրա զգայուն հոգին։ Այդ ամենի հետ մեկտեղ է՛լ ավելի ծանր վիճակ է ստեղծվել նրա համար, երբ նա իր կյանքի վերջին տարիներն ակամայից անց է կացրել պանդխտության մեջ՝ հեռու հայրենի եզերքից, հարազատների կարոտը սրտում։ Նա գիտակցել, կանխազգացել է, որ կյանքի պայմաններն այնպիսին են, որ ինքը, ի վերջո, իր վախճանը չի գտնելու հայրենի երկրում, մնալու է օտարության մեջ.

Ծնայ յԱրապկիր, ուր իմ հայրենիք,
Ուր ես հարսնացայ ի հասակ ծաղիկ.
Ո՜հ, յօտարութեան՝ ի թարմ հասակիս,

11 Նույն տեղում։
12 «Բազմավեպ», 1929, հ. 99, էջ 23։
13 Նույն տեղում։

Սեւ նարօտ մահուան կապեցաւ գլխիս.
Կարօտ հայրենեաց անձկալիր հոգիս,
Ո՜հ, ամփոփեցաւ ի յօտար շիրմիս[14]։ (1889 թ.)։

Հաշտվելով օտարության մեջ կյանքին հրաժեշտ տալու գաղտնի իրողության հետ, հայ կինը փորձում է վիշտն ու տխրությունը փարատել այն հավատով, թե ինքը ոչ թե մեռնելու է, այլ գնալու է աստծուն «ի տես»։

Վիմագիր բանաստեղծությունների մեջ հստակորեն շեշտվում է պանդուխտ հայի հայրենիքը, ծննդավայրը։ Ուր էլ որ հասած լինի, ինչ վիճակի մեջ էլ որ գտնվելիս լինի, նա երբեք չի օտարանում իր ծննդավայրից։ Այն չի մոռացվում, քանի որ հայրենի երկրի՝ ծննդավայրի, հետ են կապված նրա կյանքի թե՛ տխուր և թե՛ ուրախ պահերը և որ կարևորն է՝ այնտեղ է թողել նա իր հարազատներին՝ ծնողներին, քրոջն ու եղբորը, կնոջն ու սիրած էակին. թանկագին սրբություններ, որոնց ոչինչ չի կարող մոռացնել տալ, որովհետև նրանց կարոտը երբեք չի ստվերվում ժամանակի թանձր նստվածքով.

Յոթանասուն մէկ տարեկան
Բրգնիկի զաւակ էր ան.
Խմեց լեղին պանդուխտ կեանքի,
Դիւցազ մ'եղաւ աշխատանքի[15]։ (1842 թ.)։

Այս քառատողում ոչ միայն շեշտվում է պանդուխտ հայի ծննդավայրը, հայրենի Բրգնիկը, այլև բնորոշվում է յոթանասունմեկամյա ծերունու ողջ կյանքի ուղին։ Նա թեև ապրել է պանդուխտի չարքաշ կյանք՝ խմելով «լեղին պանդուխտ կեանքի», բայց օտարության մեջ զոր ու գիշեր աշխատել է ազնվաբար ու նվիրումով, որպես «դիւցազ մ'» աշխատանքի, այն հավատով, թե կկարողանա իր վաստակով ձեռք բերել օրվա ապրուստը և դրանից բաժին հանել նաև հարազատներին։ Աշխատավոր հայ մարդը միաժամանակ հավատացել է, թե իր ազնիվ աշխատանքով կարելի կլինի դուրս գալ այն թշվառ ու անմխիթար վիճակից, որի մեջ գտնվում են ինքը և իր նմանները։ Բրգնիկցի ծերունին պանդխտության մեջ է կնքել իր մահկանացուն այն սին հավատով, թե երկնային ամենակարող տերը իր մահից հետո տերունական լույսով կպսակի իր ճակատը.

Տէր, քո լոյսով պսակէ ալ՝
Քրտնած ճակատը վաստակեալ[16]։ (1842 թ.)։

Փառակեցի պանդուխտ հայի համար թշվառ վիճակից դուրս գալու միակ ելքը մահն էր՝ այն զորավոր ուժը, որ վերջ է դնելու պանդուխտի չարքաշ կյանքին։ Նա հույս է ունեցել, թե մահից հետո երկնային տերը չի մոռանա իրեն պարգևել անանց կյանք, անմահացնել.

---

14 Գ. Ա. Գասպարյան, Հ. Հ. Խաչյան, նշվ. աշխ., էջ 176։
15 Հ. Քոսյան, Գերեզմանատուն կաթողիկե հայոց, էջ 163։
16 Նույն տեղում։

Տեղեաւ գոլով Նախջեւանցի,
Գողթան տանէն Փառակեցի,
Ի սոյն քաղաքս[17] հանդիպի,
Եւ յանանց կեանսն փոխի[18]։ (1771 թ.)։

Ասացինք, որ բոլոր պանդուխտներին չէր, որ բախտ էր վիճակվում վերադառնալ հայրենի օջախ, ոմանք պանդխտության մեջ էին մնում մինչև խոր ծերություն։ Ավելի ողբերգականն այն էր, որ շատ պանդուխտներ երիտասարդ հասակում էին հափշտակվում «ի նետէ մահուն».

Քաջ երիտասարդ Յովհաննէս անուն,
Պարզամիտ և հեզ՝ լեալ ի բնութիւն.
Մինչ էր ի Պոլիս՝ զուրկ ի հայրենւոյն,
Լինելով պանդուխտ ի յօտարութիւն,
Յափշտակեցաւ ի նետէ մահուն[19]։

XVIII—XIX դդ. հայ վիմագիր բանաստեղծությունների մեջ հիմնականում արտացոլված են այն պանդուխտների կյանքը և հոգեկան ապրումները, ովքեր օտար ափերում են՝ կնքել իրենց մահկանացուն։ Նման ստեղծագործություններից պարզվում է, որ Կ. Պոլիսը դեռ հնուց հեղեղվել էր հայ պանդուխտներով և դրանց մեջ իրենց բաժինն ուներ Արևմտյան Հայաստանի բոլոր գավառների հայ բնակչությունը. հատկապես մեծ թիվ են կազմել Սեբաստիայի գավառի Բրգնիկի հայերը։ Նրանք չկարողանալով վերադառնալ իրենց հայրենի երկիրը, միշտ կարոտով են հիշել իրենց ծննդավայրը։ Նրանց թախիծը լի է անխառն կարոտով ու ափսոսանքով.

Ո՜վ արհաւիրք դառն մահուան,
Յանկարծ ձգեց զիս յայս տապան,
Յօտար երկիր պանդխտութեան[20]... (1889 թ.)։

Կամ՝

Փոխեալ ի կեանս անզրուական,
Թողեալ ի սուգ զիւր տոհմն համայն,
Ինքն ի գիւղէ Բագրատունեան,
Հոս կրհանգչի պանդխտական[21]։ (1858 թ.)։

Վիմագիր բանաստեղծությունների մեջ դրսևորված է նաև կյանքի երևույթների մի այլ կողմ. բանաստեղծության հերոսը՝ տվյալ դեպքում պանդուխտ հայը, ի վերջո ի վիճակի չլինելով հասկանալ իր չարքաշ կյանքի պատճառը, գալիս է այն թյուր համոզման, թե այն ամենը, ինչ կատարվում է իրականության մեջ, տեղի է ունենում երկնային տիրոջ կամքով։ Նա է, որ անո-

17 Նկատի ունի Զմյուռնիան։
18 Հ. Քոսյան. Հայք ի Զմյուռնիա, հ. Ա, Վիեննա, 1925, էջ 94։
19 «Բազմավեպ», 1930, հ. ՁԸ, էջ 174։
20 Հ. Քոսյան, Դերեզմանատուն կաթողիկե հայոց..., էջ 178։
21 Նույն տեղում, էջ 167։

ղոքաբար վճռում է յուրաքանչյուր մարդկային էակի կյանքի ընթացքը։ Ահա թե ինչու պանդուխտը, հաշտվելով այդ մտայնության հետ, այսինքն՝ մարդու կյանքն ապավինելով ճակատագրի քմահաճ խաղին, սփոփել է իրեն այն սին մտքով, թե ինքը այս աշխարհից հեռանալու է աստծո կամքով, հետևապես առանց սարսափի ու տրտունջի պետք է ընդունի մահը՝ որպես անխուսափելի մի ճշմարտություն.

Պանդխտեցայ հայրենիքէս,
Հոս գոհ էի իմ վիճակէս,
Մահը զրկեց ամէն բանէս,
Ստեղծողին սուրբ կամքն այսպէս[22]։ (1888 թ.)։

Վիմագիր բանաստեղծություններում ակներև է նաև այն համոզմունքը, թե երկրային կյանքը (լինի դա պանդխտության մեջ, թե բարեկեցիկ պայմաններում) անցողիկ է ու անկայուն, և որ մարդու համար մնայուն ու հավերժական հայրենիքը դա երկնային կյանքն է։ Ըստ այդմ՝ երկնային կյանքի արժանանալով, մարդը ձերբազատվում է ամեն տեսակ հոգսերից ու տառապանքներից և միայն այնտեղ կարող է ապրել հավերժական կյանքով.

Վարուքն ամբիծ եւ սրբբասուն,
Պանդուխտ յերկրի անկայուն,
Ըզհայրենիս խնդրեաց յերկին
Յոթեւանս անմահին[23]։ (1866 թ.)։

Վիմագիր մի բանաստեղծության մեջ ճգնավորի կյանք վարող հայ մարդն իրեն համարում է «հին տոհմ մեծ ազգի»։ Բանաստեղծության մեջ պատկերված է նրա անցած կյանքի դժվարին ճանապարհը, մի կյանք, որը լի է ողբերգությամբ։ Դա խավարամիտ միջավայրում ապրած ու տառապած մարդկային անհատի կերպարն է, որ իրական գույներով հառնում է մեր առջև։ Նա անտերունչ թողնելով կնոջն ու երեխաներին, ճգնավորի կյանք է վարել, որովհետև հավատացել է, թե օտարության մեջ և ճգնավորի կյանք վարելով կկարողանա՝

Տեսանել զնա,
Ում զինուորեցայ[24]։

Նա ևս իր մահկանացուն կնքում է օտարության մեջ.

Ի Շամքոր ծնեալ,
Ի Վիրս պանդխտեալ,
Թողի զՏփխիս,
Զկին, զորդիս,
Յանձնեալ տեառն զիս,
Մտի յայս կղզիս[25]։ (1855 թ.)։

---

22 Հ. Քոսյան, Բարձր Հայք, հ. Ա, էջ 484։
23 Հ. Քոսյան, Դերեզմանատուն կաթողիկե հայոց..., էջ 117։
24 «Ազգագրական հանդես», 1908, գ. XVII, էջ 83—84։
25 Նույն տեղում։ Նկատի ունի Սևանա կղզին։

Ինչպես կարելի է նկատել՝ տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններից ելք չգտնելով, աշխատավոր մարդը անցյալում ակամա ապավինել է աստծուն, մի իրողություն, որը սոսկ մխիթարանք էր և ոչ թե հարցի լուծում։

Հայ վիմագիր բանաստեղծություններում թվում է, թե սոսկ մարդկային առանձին անհատների թախիծն ու մտորումներն են պատկերված, սակայն իրականում այդ թախիծը համազգային է, քանի որ նույն այդ դժբախտ ճակատագիրը բաժանում են հազարավոր ու հազարավոր բնավեր հայեր։ Նրանց բոլորի թախիծն ու մտորումները, տագնապները նույն ելակետն ունեն, նույն դրդապատճառը։ Տխրությունն ու հայրենակարոտ թախիծը ընդհանուր են, որովհետև պանդխտության երևույթն ինքը ընդհանուր էր՝ համազգային.

Ցաւ է սիրտի այս միայն,
Որ հայրենեաց չէ դամբան.
Քանի՞ հազար ինձ նման
Հանգեաւ օտար դերեզման[26]։ (1900 թ.)։

Սակայն բոլորը չէ, որ հաշտվել են մահից հետո օտարության մեջ մնալու մտքի հետ։ Ոմանց միակ փափագն ու ցանկությունն է, որպեսզի իրենց մահից հետո, եթե ոչ մարմինը, գոնե սիրտը թաղվի հայրենի հողում.

Ի հրամանի իւր կտակի՝
Սիրտն հանեալ մարմնոյն անտի
Եւ առաքեալ իւր հայրենի՝
Որ է դեօղն Ջուղա ասի[27]։ (1751 թ.)։

XVIII—XIX դդ. հայ վիմագիր բանաստեղծությունների մեջ ուրույն երանգով ու հուզականությամբ է հնչում աշխարհին հրաժեշտ տվողի ձայնը, երբ նա դիմում է ոչ միայն իր հարազատներին, այլև իր հայրենի երկրին ու հարազատ վայրերին։ Նա թախծում է ոչ միայն հայրենիքի կարոտից, այլ նաև այն բանից, որ երբեք չեն իրականանալու իր իղձերը։ Գեղեցիկ հայրենիքը կրկին տեսնելու փափագից այրվող աշխատավոր հայ մարդու անկեղծ ու սրտաբուխ հառաչանքն ու տրտունջն է խտացված ստորև բերվող վիմագիր տողերում.

Ա՜հ, իմ բաղձանքներ մնաց անկատար,
Ո՜հ իմ հայրենիք, սիրուն Արարկիր,
Ալ չեմ շնչելու քո անուշ հովեր...[28]։ (1878 թ.)։

Հուզիչ է նաև վանեցի պանդուխտ հայի հրաժեշտի խոսքը՝ ուղղված պանդխտության մեջ դեգերող իր բազում հայրենակիցներին։ Նա թախանձագին խնդրում է իր հայրենակիցներին՝ լսել իրեն, որպեսզի ինքը նրանց գոնե մեկ անգամ պատմի օտարության մեջ կրած իր տառապանքների, կորցրած ու թշվառության մեջ գտնվող իր հայրենիքի մասին։ Նա հուսով է, որ այդ զրույցը կարող է թեթևացնել իր կրած տառապանքներն ու զրկանքները.

---

26 Ա. Գարտաշյան, Նյութեր եգիպտոսի հայոց պատմության համար, էջ 167։
27 «Բազմավեպ», 1929, էջ 323։
28 Ա. Գարտաշյան, Նյութեր եգիպտոսի հայոց պատմության համար, էջ 297։

Պանդուխտ հայ, քիչ մը կեցիր հոս
Ու հարց մ'ուղղէ քարիս անխոս...[29]։ (1846 թ.)։

Ո՞րն է մտահոգիչ այն պարագան, որ ծանրացել է պանդխտության դիմած վասպուրականցի հայի սրտին։ Մարդկային այս անհատի համար ևս դժվար է կորցնել ոչ միայն հարազատներին, այլև հայրենի երկիրը.

Ղարիպ թողի Վարագ ու Վան,
Ա՜խ, չտեսած Վասպուրական,
Ննջեմ պիտի հոս յաւիտեան...[30]։ (1846 թ.)։

Պանդուխտ մարդու ոչ միայն կյանքի թելն է կտրվում, այլև նրա տխուր վախճանի հետ գերեզման են իջնում տարիների փայփայած երազանքներն ու հույսերը։ Կենդանի և հուզիչ խոսքերով է պատկերված հայ մարդու կյանքում կատարված ճակատագրական փոփոխությունը հետևյալ քառատողում.

Աննման գարունս աշնան փոխվեցաւ,
Գոսացուց, խամրեց կեանքս կրծոց ցաւ,
Ու լուռ, դալկահար հողին յանձնեցի
Պանդուխտի անուրջս, յոյսերս հայեցի[31]։ (1897 թ.)։

Պանդուխտն իրեն սփոփում է այն մտայնությամբ, թե մահը այն հզոր և անդիմադրելի ուժն է, որից նույնիսկ թագավորներն ու իմաստուններ չեն կարողացել խույս տալ.

Ո՞ր իմաստուն, ո՞ր թագաւոր
Անմահ մընաց մարմընաւոր.
Մահը մարդոց դաշինք չըներ,
Կառնէ տանի մէծեր, փոքրեր[32]։ (1879 թ.)։

Պանդխտության մեջ կրած տառապանքները, ազգային ու կրոնական հալածանքներ օտարության մեջ գտնվող հայ աշխատավոր մարդու սրտից չեն կարողացել ջնջել սերը դեպի իր թշվառ հայրենիքը, չեն մեռցրել դեպի հայրենիք ու հարազատների գիրկը վերադառնալու հավատն ու հույսը։ Պանդխտության դիմելու և կրկին հայրենի երկիր վերադառնալու հավատով են տոգորված շատ վիմագիր բանաստեղծություններ.

Բաբէ, բախտ իմ կուրութեան,
Որ զարար զիս արժանի՝
Կատարելով զփափագ սրտիս՝
Դառնալ յիմ տուն հայրենի...[33]։ (1828 թ.)։

---

29 Նույն տեղում, էջ 59։
30 Նույն տեղում։
31 Նույն տեղում, էջ 299։
32 Գ. Ա. Գասպարյան, Հ. Հ. Խաչյան, նշվ. աշխ., էջ 202։
33 Ա. Գարտաշյան, նշվ. աշխ.. էջ 32։

Այսպիսով, պանդուխտների մասին XVIII—XIX դարերում ստեղծված վիմագիր բանաստեղծությունները պատկերում են ուրույն մի աշխարհ, շոշափում պանդխտած հայ աշխատավորի առօրյա հոգսերը, նրա թախիծով ու տխրությամբ լի կյանքի էջերը։ Այդ ընույթի վիմագիր բանաստեղծությունները, իհարկե, չէին կարող ստանալ այն ժողովրդականությունը, որպիսին ունեցան պանդխտության երգերը, սակայն, այնուամենայնիվ, պատմա-գեղագիտական առումով դրանք ուշագրավ ստեղծագործություններ են։

ТЕМА СТРАННИЧЕСТВА В АРМЯНСКИХ ЛАПИДАРНЫХ СТИХАХ XVIII—XIX вв.

СЕРГЕЙ ГЕВОРКЯН

Резюме

Армянские лапидарные стихотворения, созданные в XVIII—XIX вв., отражают своеобразный мир пандухта-странника, его повседневные заботы, жизнь, полную тоски и лишений. В этих стихотворениях наряду с описанием тяжелого положения странника на чужбине порою заметен его глухой протест против существующих порядков.